«Նեքսիա Արմենիա»
փակ բաժնետիրական ընկերություն

2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ
ԵՎ ԱՅԴ ԱՄՍԱԹՎԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆ 2025

«Նեքսիա Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություն

Հաշվեկշիռ ֆինանսական վիճակի մասին

2024 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

հազար դրամ

	Ծան.	31.12.2024թ.	31.12.2023թ.
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	79,543	75,513
Ոչ նյութական ակտիվներ		816	24
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	5	146,391	97,662
Հետաձգված հարկային ակտիվներ	6	2,009	1,385
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**228,759**	**174,584**
Ընթացիկ ակտիվներ			
Առևտրական դեբիտորական պարտքեր	7	74,708	49,223
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8	39,670	16,853
Այլ ակտիվներ	9	823	24,156
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**115,201**	**90,232**
Ընդամենը ակտիվներ		**343,960**	**264,816**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ		16,000	8,000
Կուտակված շահույթ		68,842	81,497
Պահուստային կապիտալ		15	15
Ընդամենը սեփական կապիտալ		**84,857**	**89,512**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
		-	-
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**-**	**-**
Ընթացիկ պարտավորություններ			
Փոխառություններ	10	143,517	87,673
Ստացված ընթացիկ կանխավճարներ		13,200	8,950
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	11	22,015	17,993
Շահութահարկի գծով պարտավորություն		20,978	18,271
Այլ հարկերի և վճարների գծով պարտավորություններ		11,493	2,933
Այլ պարտավորություններ	12	47,900	39,484
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**259,103**	**175,304**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**343,960**	**264,816**

Տնօրեն՝ Հաշվապահ՝

Արթուր Հարությունյան Մելորա Մեյրոյան

28 մարտի 2025թ.

«Նեքսիա Արմենիա» "Нексиа Армения" "Nexia Armenia" 01529594

«Նեքսիա Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություն

Հաշվետվություն համապարփակ ֆինանսական արդյունքների մասին

31 դեկտեմբերի 2024 թ. ավարտվող տարվա

հազար դրամ

	Ծան.	2024թ.	2023թ.
Հասույթ	13	500,434	423,350
Վաճառքի ինքնարժեք	14	(263,578)	(221,444)
Համախառն շահույթ		**236,856**	**201,906**
Վարչական և այլ ընդհանուր ծախսեր	15	(73,713)	(44,193)
Այլ եկամուտներ	16	508	707
Այլ ծախսեր	16	(974)	(940)
Շահույթ մինչև հարկումը		**162,677**	**157,480**
Շահութահարկի գծով եկամուտ (ծախս)	17	(29,276)	(28,257)
ՏԱՐՎԱ ՇԱՀՈՒՅԹ		**133,401**	**129,223**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ		**133,401**	**129,223**

Տնօրեն

Արթուր Հարությունյան

Հաշվապահ

Մելորա Մեյրոյան

28 մարտի 2025թ.

«Նեքսիա Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություն

Հաշվետվություն սեփական կապիտալում փոփոխությունների մասին

31 դեկտեմբերի 2024 թ. ավարտվող տարվա

հազար դրամ

	Կանոնադրական կապիտալ	Չբաշխված շահույթ	Պահուստային կապիտալ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**100**	**95,455**	**15**	**95,455**
2023 թ. ընթացքում փոփոխություններ				
Հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	129,223	-	**129,223**
Շահաբաժնի հատկացում	-	(143,181)	-	**(143,181)**
Կանոնադրական կապիտալի ավելացում	7,900	-	-	**7,900**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.	**8,000**	**81,497**	**15**	**89,512**
2024 թ. ընթացքում փոփոխություններ				
Հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	133,401	-	**133,401**
Շահաբաժնի հատկացում	-	(146,056)	-	**(146,056)**
Կանոնադրական կապիտալի ավելացում	8,000		-	**8,000**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.	**16,000**	**68,842**	**15**	**84,857**

Տնօրեն

Արթուր Հարությունյան

28 մարտի 2025թ.

Հաշվապահ

Մելորա Մեյրոյան

«Նեքսիա Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություն

Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ

31 դեկտեմբերի 2024 թ. ավարտվող տարվա

		հազար դրամ
Գործառնական գործունեությունից հոսքեր	**2024թ.**	**2023թ.**
Ծառայությունների մատուցումից	569,292	549,372
Այլ մուտքեր	3,100	1,666
Վճարումներ մատակարարներին ապրանքների և ծառայությունների համար	(44,278)	(49,604)
Վարձակալություն	(9,597)	(7,767)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(252,834)	(198,595)
Շահութահարկի վճարում	(26,145)	(26,268)
Այլ հարկեր և տուրքեր	(78,013)	(73,697)
Այլ ելքեր	(15,665)	(12,110)
Ընդամենը գործառնական գործունեությունից զուտ հոսքեր	**145,860**	**182,997**
Ներդրումային գործունեությունից հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերումից	(64,973)	(86,767)
Փոխառությունների մարում՝ զուտ	18,379	-
Փոխառությունների տրամադրում՝ զուտ	-	(20,836)
Ընդամենը ներդրումային գործունեությունից զուտ հոսքեր	**(46,594)**	**(107,603)**
Ֆինանսական գործունեությունից հոսքեր		
Կանոնադրական կապիտալում ներդրումներից	8,000	7,900
Փոխառությունների ստացումից	82,421	41,600
Փոխառությունների մարումից	(26,273)	
Վճարված շահաբաժիններ	(140,680)	(153,355)
Ընդամենը ֆինանսական գործունեությունից զուտ հոսքեր	**(76,532)**	**(103,855)**
Ընդամենը զուտ հոսքեր	**22,734**	**(28,461)**
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	83	(482)
Դրամական միջոցների մնացորդը առ 1 հունվարի	**16,853**	**45,796**
Դրամական միջոցների մնացորդը առ 31 դեկտեմբերի	**39,670**	**16,853**

Տնօրեն

Արթուր Հարությունյան

Հաշվապահ

Մելորա Մեյրոյան

28 մարտի 2025թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ընդհանուր տեղեկություններ

«Նեքսիա Արմենիա» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) ստեղծվել է 2004թ. դեկտեմբերին «Էյ-Էն Քոնսալթ» ՓԲԸ անվամբ՝ 1998թ. ստեղծված «Արշիար» ՍՊԸ-ի վերակազմավորմամբ: 2010թ. դեկտեմբերին «Էյ-Էն Քոնսալթ» ՓԲԸ-ն վերանվանվել է «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ի, իսկ 2024 թվականի հոկտեմբերի 1-ին՝ «Նեքսիա Արմենիա» ՓԲԸ:

Ընկերությունը գործում է ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքին, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքին, այլ իրավական ակտերին և իր կանոնադրությանը համապատասխան:

Ընկերության գտնվելու վայրն է՝ ՀՀ. ք. Երևան, Կոմիտասի պող 15/7, իսկ իրավաբանական հասցեն՝ ՀՀ. ք. Երևան, Գյուլբենկյան 30/3 շենք, թիվ 129:

Հարկ վճարողի հաշվառման համարը՝ 01529594:

Աշխատակիցների ցուցակային թվաքանակը տարեվերջին եղել է 32 հոգի (31.12.2023թ.՝ 28 հոգի):

Ընկերության հիմնական գործունեությունը հաշվապահական և աուդիտորական ծառայությունների մատուցումն է: Ընկերությունը ՀՀ ֆինանսների նախարարությունից աուդիտորական ծառայությունների լիցենզիա է ստացել 2010թ. ապրիլին: 2020թ. դեկտեմբերի 24-ին գրանցվել է Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի ռեեստրում՝ Պալատի խորհրդի նույն օրվա թիվ 16 որոշմամբ. հիմնական գրանցման գրառման համարն է՝ 1 20 0370:

Ընկերության կանոնադրական կապիտալը բաղկացած է 8,000 հատ 1,000 դրամ անվանական արժեքով սովորական բաժնետոմսերից: Ընկերության բաժնետերերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է ստորև.

Բաժնետիրոջ անունը	Բաժնետոմսերի տոկոսը և քանակը
Արթուր Հարությունյան (որակավորված աուդիտոր)	50 տոկոս (8000 հատ)
Նաիրի Ադամյան (որակավորված աուդիտոր)	50 տոկոս (8000 հատ)

2013 թ. աշնանը Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիայի կողմից նախաձեռնված և արտերկրյա անկախ փորձագետի կողմից իրականացված աուդիտի որակի մոնիթորինգը հաջողությամբ անցնելուց հետո, Ընկերությունը 2015 թ. հաջողությամբ անցել է նաև NEXIA International միջազգային աուդիտորական ցանցի (խոշորագույն տասնյակի մաս կազմող) կողմից իրականացված աուդիտի որակի ստուգումը (մոնիթորինգը) և 2015 թ. մարտից դարձել է NEXIA International միջազգային հաշվապահական և աուդիտորական կազմակերպությունների ցանցի անդամ:

2024 թվականին Ընկերությունը որդեգրել է NEXIA ցանցի հետ առավելագույն ինտեգրման մոտեցումը և հոկտեմբերի 1-ից վերանվանվել է «Նեքսիա Արմենիա» ՓԲԸ:

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և Պատրաստման հիմունքները

2.1. Համապատասխանությունը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Փոքր ու միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (ՓՄԿ ՖՀՄՍ) համապատասխան (Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից 2015 թվականի մայիսին հրապարակված փոփոխություններով)՝ ՀՀ կառավարության 25 մայիսի 2017 թվականի № 559-Ն որոշմամբ հրապարակված պաշտոնական հայերեն տարբերակով:

2.2. Չափման հիմունքները

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են չափման սկզբնական արժեքի հիմունքով:

2.3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

Հայաստանի Հանրապետության արժույթը ՀՀ դրամն է, որը Ընկերության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ֆինանսական տեղեկատվությունում թվերը ներառված են հազար դրամներով՝ առանց ստորակետից հետո տասնորդական նիշի:

2.4. Ստորագրումը

Սույն ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2025թ. մարտի 28-ին՝ Ընկերության տնօրեն Ա. Հարությունյանի և հաշվապահ Մ. Մեյրոյանի կողմից:

2.5. Գնահատումների և դատողությունների օգտագործումը

ՓՄԿ ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար անհրաժեշտ է, որ ղեկավարությունը կատարի դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդում են հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններում ներկայացվող ակտիվների, պարտավորու-թյունների, եկամուտների և ծախսերի գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են այդ գնահատումներից տարբեր լինել:

Գնահատումներն ու դրանց հիմքում ընկած ենթադրությունները շարունակական հիմունքով վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումների արդյունքները ճանաչվում են վերանայման ժամանակաշրջանում և հետագա ժամանակաշրջաններում, որոնց վրա ազդում են:

2.6. Հրապարակված, բայց դեռ ուժի մեջ չմտած ՓՄԿ ՖՀՄՍ

2025 թվականի փետրվարին Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդը հրապարակեց «Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտը» (ՓՄԿ ՖՀՄՍ)՝ երրորդ խմբագրությամբ, որը պարտադիր կիրառելի է 2027 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար, իսկ վաղաժամ կիրառությունը թույլատրելի է: ՀՀ-ում ՓՄԿ ՖՀՄՍ երրորդ խմբագրությունը պարտադիր կիրառելի կդառնա պաշտոնապես հայերեն թարգմանվելուց և պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո միայն:

Երկրորդ խմբագրությամբ ՓՄԿ ՖՀՄՍ-ն հրապարակվել էր 2015 թվականին: Այն ժամանակվանից ի վեր բազմաթիվ փոփոխություններ էին տեղի ունեցել ամբողջական ՖՀՄՍ-ներում: ՓՄԿ ՖՀՄՍ երրորդ խմբագրության մեջ ներառվել են ամբողջական ՖՀՄՍ-ներում տեղի ունեցած

փոփոխությունները՝ այնքանով, որքանով տեղին են համարվել փոքր ու միջին կազմակերպությունների համար:

Ակնկալվում է, որ երբ Ընկերությունը կիրառի ՓՄԿ ՖՀՄՍ երրորդ խմբագրությունը, այն ազդեցություն կունենա իր ֆինանսական հաշվետվությունների վրա, սակայն այս պահին չկա հստակ գնահատական այդպիսի ազդեցությունների: Ստորև նշում ենք մի քանի կարևոր փոփոխություններ:

- Ներմուծվել են չափման, ներկայացման և բացահայտման նոր հայեցակարգեր և ապաճանաչման վերաբերյալ ուղեցույց,
- Նորացվել են ակտիվների և պարտավորությունների սահմանումները և ճանաչման չափանիշները,
- Հստակեցվել են հաշվենկատության, «խնամակալության», չափման անորոշության և ձևի նկատմամբ բովանդակության գերակայության հասկացությունները,
- Փոփոխվել են ֆինանսական գործիքների հաշվառման մոտեցումները, մասնավորապես՝
    - ներդրվել է պահանջ դասակարգելու ֆինանսական գործիքը՝ հիմք ընդունելով պայմանագրային դրամական հոսքերի բնութագրերը (առանց դիտարկելու բիզնես մոդելը),
    - ավելացվել է պահանջ՝ բացահայտելու ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքների ժամկետայնությունը,
    - ավելացվել է ֆինանսական երաշխավորության պայմանագրի սահմանումը և փոփոխվել տրամադրված ներխմբային ֆինանսական երաշխավորության պայմանագրերի գծով պահանջները,
    - հանվել է «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ի ճանաչման և չափման պահանջները կիրառելու ընտրանքը.
- Ավելացվել է նոր բաժին՝ Իրական արժեքի չափման վերաբերյալ, որը համահունչ է «Իրական արժեքի չափում» ՀՀՄՍ 13-ին,
- Վերանայվել է «Բիզնեսների միավորում և գուդվիլ» բաժինը,
- Վերանայվել է հասույթի վերաբերյալ բաժինը՝ «Գնորդների հետ պայմանագրերից հասույթ» ՖՀՄՍ 15-ին համահունչ, որդեգրելով հասույթի ճանաչման հնգաքայլ մոդելը՝ որոշակի պարզեցումներով:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն

1. Հիմնական միջոցների հետագա չափման մոտեցումները՝ սկզբնական ճանաչումից հետո հիմնական միջոցները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստը: Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանն ուղղակի վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը, ուղղակի աշխատուժի գծով ծախսերը, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած այլ ծախսումները:

Ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար գնահատված օգտակար ծառայությունները ներկայացված են ստորև.

Շենք	50 տարի
Տրանսպորտային միջոց	8 տարի
Համակարգչային տեխնիկա	1-3 տարի
Տնտեսական և գրասենյակային գույք	1-8 տարի:

2. Ոչ նյութական ակտիվների հետագա չափման հիմունքները՝ սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կուտակված կորուստը:

Ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար գնահատված օգտակար ծառայությունները ներկայացված են ստորև.

- Համակարգչային հաշվապահական ծրագիր 5 տարի
- Այլ ոչ նյութական ակտիվներ՝ իրավունքների պայմանագրային ժամկետներով (սովորաբար՝ 1 տարի՝ վճարի դիմաց ամենամյա երկարացմամբ):

3. Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով: Ծառայությունների մատուցումից հասույթը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ հաշվետու ամսաթվի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանի հիման վրա: Ավարտվածության աստիճանը գնահատվում է կատարված աշխատանքների ուսումնասիրության հիման վրա:

4. Արտարժույթի փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդ-վածների մարման արդյունքում կամ երբ դրամային հոդվածները հաշվետվության մեջ ներկայացվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնական գրանցման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում գրանցման փոխարժեքից, ճանաչվում են որպես օգուտ կամ կորուստ այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

5. Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերի գծով ծախսից (եկամտից): Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ հարկը վերաբերում է բիզնեսի միավորմանը կամ էլ այնպիսի հոդվածի, որը ճանաչված է ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկի գծով ծախսը (եկամուտը) ներառում է հարկի այն գումարը, որն ակնկալվում է վճարել տարվա հարկվող շահույթի գծով՝ օգտագործելով հարկի այն դրույքները, որոնք ուժի մեջ են կամ ըստ էության ուժի մեջ են հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, ինչպես նաև նախորդ տարիների ընթացիկ հարկի գծով ճշգրտումները:

Հետաձգված հարկը ճանաչվում է ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք իրենցից ներկայացնում են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային բա-զաների միջև տարբերությունները: Հարկային բազան ակտիվին կամ պարտավորությանը հարկային նպատակով վերագրված գումարն է: Հետաձգված հարկ չի ճանաչվում այն ժամանակավոր տարբե-րությունների գծով, որոնք առաջանում են ձեռնարկատիրական գործունեության միավորում չհանդի-սացող այնպիսի գործարքի ներքո ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչումից, որը ճանաչման պահին չի ազդում ոչ հաշվապահական և ոչ էլ հարկվող շահույթի վրա: Հետաձգված հարկը չափվում է հարկի այն դրույքներով, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ, երբ դրանք կհակադարձվեն, հիմք ընդունելով այն օրենքները, որոնք ուժի մեջ են կամ ըստ էության ուժի մեջ են հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է չօգտագործված հարկային զեղչերի, չօգտագործված հարկային վնասների և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով՝ այնքանով, որքանով հավանական է ապագա հարկվող շահույթների ստացումը, որոնց դիմաց դրանք կարող են օգտագործվել: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են՝ այն չափով, որով այլևս հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտները կարող են օգտագործվել:

6. Պահուստ ճանաչվում է, երբ որպես անցյալ դեպքի արդյունք, Ընկերությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն, որը կարող է արժանահավատորեն գնահատվել, և հավանական է, որ այդ պարտականությունը կատարելու համար կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստը չափվում է ակնկալվող ապագա դրամական հոսքերի զեղչմամբ՝ օգտագործելով մինչև հարկումը այնպիսի դրույք, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի և տվյալ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատականը: Ժամանակ անցնելուն զուգընթաց պահուստի գծով զեղչի հետպտույտը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս: Երբ ակնկալվում է, որ հաշվետու ժամանակաշրջանից հետո ոչ ավել, քան մեկ տարվա ընթացքում են տեղի ունենալու պահուստի մարման համար անհրաժեշտ դրամական արտահոսքերը և զեղչման ազդեցությունն էական չէ, պահուստը կարող է չափվել գնահատված դրամական արտահոսքերի անվանական գումարով՝ առանց զեղչման:

7. Աշխատակիցների հատուցումները ներառում են՝

a. աշխատավարձը
b. կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները, ինչպիսիք են վճարովի տարեկան արձակուրդը և ժամանակավոր անաշխատունակության նպաստը,
c. գործատուի հաշվին վճարվող դրոշմանիշային վճարը և նպատակային սոցիալական վճարը,
d. պարգևավճարները և այլ խրախուսիչ վճարները
e. առողջության ապահովագրությունը:

Աշխատակիցների հատուցումների այն գումարը, որն ակնկալվում է վճարել հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում աշխատակիցներից ստացված ծառայության դիմաց, ճանաչվում է՝ ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո, և բ) որպես ծախս, բացառությամբ, երբ որևէ ստանդարտով պահանջվում կամ թույլատրվում է այդ հատուցումների ներառումը որևէ ակտիվի ինքնարժեքի (սկզբնական արժեքի) մեջ: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների գումարը, ապա Ընկերությունն այդ գերազանցումը ճանաչում է որպես ակտիվ (կանխավճարված ծախս) այնքանով, որքանով այդ կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների նվազման կամ դրամական միջոցների վերադարձի:

Ընկերությունը աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումը, կուտակվող փոխհատուցելի բացակայությունների ձևով (ինչպիսին է վճարովի ամենամյա արձակուրդը) ճանաչում է, երբ աշխատակիցները մատուցում են ծառայություն, որը ավելացնում է ապագա փոխհատուցելի բացակայությունների նրանց իրավունքը: Կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումը չափվում է այն լրացուցիչ գումարով, որն Ընկերությունն ակնկալում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք:

4. Հիմնական միջոցներ

	Շենք	Համակարգչային տեխնիկա	Տրանսպորտային միջոց	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք					
Մնացորդ առ 31.12.2022թ.	**64,394**	**26,280**	**48,004**	**10,339**	**149,017**
Ավելացում		2,207		12	2,219
Դուրսգրում		(1,453)		0	(1,453)
Մնացորդ առ 31.12.2023թ.	**64,394**	**27,034**	**48,004**	**10,351**	**149,783**
Ավելացում		3,975		11,959	15,934
Դուրսգրում					
Մնացորդ առ 31.12.2024թ.	**64,394**	**31,009**	**48,004**	**22,310**	**165,717**
Մաշվածություն					
Մնացորդ առ 31.12.2022թ.	**13,058**	**17,199**	**24,142**	**9,719**	**64,118**
Տարվա մաշվածություն	1,289	4,147	6,022	147	11,605
Դուրսգրում		(1,453)			(1,453)
Մնացորդ առ 31.12.2023թ.	**14,347**	**19,893**	**30,164**	**9,866**	**74,270**
Տարվա մաշվածություն	1,289	4,219	6,022	374	11,904
Դուրսգրում					
Մնացորդ առ 31.12.2024թ.	**15,636**	**24,112**	**36,186**	**10,240**	**86,174**
Հաշվեկշռային արժեք					
Առ 31.12.2023թ.	**50,047**	**7,141**	**17,840**	**485**	**75,513**
Առ 31.12.2024թ.	**48,758**	**6,897**	**11,818**	**12,070**	**79,543**

5. Այլ ոչ ընթացիկ ակտիվներ

Այլ ոչ ընթացիկ ակտիվները իրենցից ներկայացնում են Ընկերության նոր գրասենյակային տարածքի ձեռքբերման և կառուցման համար կատարված ծախսումներն ու կանխավճարները:

6. Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

(a) *Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ*

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները կապված են ստորև նշվածներին վերաբերող ժամանակավոր տարբերությունների հետ: Հաշվետու ժամանակաշրջանի վերջին դրանք չափվել են 18% դրույքաչափի կիրառմամբ:

	Ակտիվներ		Պարտավորություններ		Զուտ ակտիվ (պարտավորություն)	
Հազ. դրամ	**2024**	**2023**	**2024**	**2023**	**2024**	**2023**
Հիմնական միջոցներ			(5,415)	(5,097)	(5,415)	(5,097)
Չօգտագործված արձակուրդի և պարգևավճարի պահուստ	7,424	6,482	-	-	7,424	6,482
Զուտ հարկային ակտիվներ (պարտավորություններ)	**7,424**	**6,482**	**(5,097)**	**(5,097)**	**2,009**	**1,385**

(b) Փոփոխություններ ժամանակավոր տարբերություններում տարվա ընթացքում

Հազ. դրամ	**31 դեկտեմբերի 2023**	**Ճանաչված շահույթում կամ վնասում 2024-ին**	**31 դեկտեմբերի 2024**
Հիմնական միջոցներ	(5,097)	(318)	(5,415)
Չօգտագործված արձակուրդի պահուստ	6,482	942	7,424
Ընդամենը	**1,385**	**624)**	**2,009**

Հազ. դրամ	**31 դեկտեմբերի 2022**	**Ճանաչված շահույթում կամ վնասում 2023-ին**	**31 դեկտեմբերի 2023**
Հիմնական միջոցներ	(4,732)	(365)	(5,097)
Չօգտագործված արձակուրդի պահուստ	6,482	-	6,482
Անավարտ ծառայություն	900	(900)	-
Ընդամենը	**2,650**	**(1,265)**	**1,385**

7. Առևտրական դեբիտորական պարտքեր

Առևտրական դեբիտորական պարտքերը ենթակա են վճարման հաջորդ ամսվա ընթացքում: Ինչպես նախորդ, այնպես էլ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կան ժամկետանց դեբիտորական պարտքեր: Դեբիտորական պարտքերի գծով ճանաչված գումարներն արտացոլում են ժամկետանց գումարների չստացման գծով արժեզրկումը: Արժեզրկումից կորուստը (դրա վերականգնումից եկամուտը) ներկայացված է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այլ եկամուտների (ծախսերի) կազմում:

8. Դրամական միջոցներ և ոչ դրամային գործարքներ

	2024թ.	**2023թ.**
Դրամային բանկային հաշիվներ	30,554	11,042
Արտարժութային բանկային հաշիվներ (հիմնականում՝ ԱՄՆ դոլարով և Եվրոյով)	9,116	5,811
Ընդամենը	**39,670**	**16,853**

Հաշվետու տարվա ընթացքում տեղի է ունեցել ոչ դրամային գործարք՝ փոխառության գծով պահանջի և շահաբաժնի գծով պարտավորության հաշվանցում 5,527 հազար դրամ գումարով:

9. Այլ ակտիվներ

	2024թ.	2023թ.
Հետաձգված ծախսեր	556	-
Տրամադրած կարճաժամկետ փոխառություններ		24,111
Տրված կանխավճարներ	-	45
Այլ	9	-
Ընդամենը	**565**	**24,156**

10. Փոխառություններ

Փոխառություններն ամբողջությամբ կապակցված կողմերից են ստացված, անտոկոս, ՀՀ դրամով, չապահովված: Ենթակա են մարման փոխատուի կողմից պահանջ ներկայացնելուց մեկ տարվա ընթացքում և արտացոլված են չզեղչված՝ անվանական գումարով:

11. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր

Այստեղ ներառված են ձեռքբերված ապրանքների և ծառայությունների դիմաց մատակարարների հանդեպ կրեդիտորական պարտքերը, ինչպես նաև աշխատավարձի և այլ գործառնությունների գծով աշխատակիցների հանդեպ կրեդիտորական պարտքերը:

12. Այլ պարտավորություններ

	2024թ.	2023թ.
Պարտավորություններ շահաբաժինների գծով	-	150
Պահուստներ վաստակած արձակուրդայինների գծով	41,242	36,009
Այլ պարտավորություններ	6,658	3,325
Ընդամենը	**47,900**	**39,484**

13. Հասույթ

	2024թ.	2023թ.
Աուդիտի ծառայություններից հասույթ	70,242	49,292
Այլ հաշվապահական և խորհրդատվական ծառայություններից հասույթ	430,192	316,364
Մեկանգամյա խորհրդատվական ծառայությունից հասույթ	-	57,694
Ընդամենը	**500,434**	**423,350**

14. Վաճառքի ինքնարժեք

	2024թ.	2023թ.
Աշխատակիցների հատուցումներ (առանց ապահովագրության)	223,051	172,255
Ծառայությունների ձեռքբերում	5,695	21,919
Վարձակալություն	8,043	6,640
Մաշվածություն և ամորտիզացիա	12,040	11,634
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	3,280	1,063
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	6,764	3,228
Այլ	4,705	4,705
Ընդամենը	**263,578**	**221,444**

15. Վարչական և այլ ընդհանուր ծախսեր

	2024թ.	2023թ.
Աշխատակիցների հատուցումներ (առանց ապահովագրության)	39,362	30,398
Մարքետինգ	16,544	
Ապահովագրություն	2,928	2,947
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	1,792	777
Գրասենյակային ծախսեր	1,550	1,550
Մասնագիտական զարգացում	7,278	4,262
Այլ	4,259	4,259
Ընդամենը	**73,713**	**44,193**

16. Այլ եկամուտներ և ծախսեր

Այլ եկամուտներն հիմնականում իրենցից ներկայացնում են փոխարժեքային տարբերություններից եկամուտները: Այլ ծախսերն իրենցից ներկայացնում հիմնականում բարեգործական նպատակով տրամադրված գումարները:

17. Շահութահարկի գծով ծախս (եկամուտ)

	2024 թ.	2023 թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս	29,900	26,992
Նախորդ տարվա ընթացիկ հարկի ուղղում	-	-
Հետաձգված հարկի գծով ծախս (եկամուտ) (տե՛ս Ծանոթ. 6)	(624)	1,265
Ընդամենը	**29,276**	**28,257**

Ընկերության կիրառվող հարկի դրույքը 18 % է (2023 թ.՝ 18%):

Շահութահարկի փաստացի (արդյունքային) տոկոսադրույքի համապատասխանեցում.

	2024		2023	
	հազ. դրամ	**%**	**հազ. դրամ**	**%**
Շահույթ մինչև հարկումը	**162,677**		**157,480**	
Շահութահարկ հարկի կիրառվող դրույքով	29,282	18.0	28,346	18.0
Չնվազեցվող ծախսերի, չհարկվող եկամուտների, լրացուցիչ նվազեցումների, հարկի կիրառվող դրույքաչափի նվազման զուտ ազդեցությունը	(6)	(0.0)	(89)	(0.0)
	29,276	**18.0**	**28,257**	**18.0**

18. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Ընկերությանն կապակցված կողմերն են բաժնետերերը և նրանց ընտանիքի անդամները:

Ընկերության ղեկավարությունը ստացել է հետևյալ հատուցումները՝

Հազ. դրամ	**2024թ.**	**2023թ.**
Աշխատանքի վարձատրություն և դրան հավասարեցված վճարներ	25,023	25,283

Կապակցված կողմերի հետ փոխառությունների գծով գործարքները ներկայացված են ստորև

Հազ. դրամ	**Գործարքի գումար 2024թ.**	**Գործարքի գումար 2023թ.**	**Չմարված մնացորդ 31.12.2024թ.**	**Չմարված մնացորդ 31.12.2023թ.**
Փոխառության ստացում	82,421	41,600	144,518	86,981
Փոխառության մարում	(26,273)	(132)	-	-
Փոխառության տրամադրում	9,150	113,911	-	23,861
Փոխառության մարում	(33,011)	(90,050)	-	-

Կապակցված կողմերի հետ այլ գործարքներ՝

Հազ. դրամ	**Գործարքի գումար 2024թ.**	**Գործարքի գումար 2023թ.**	**Չմարված մնացորդ 31.12.2024թ.**	**Չմարված մնացորդ 31.12.2023թ.**
Կապակցված կողմերից վարձակալություն				
Վարձակալություն	4,008	4,008	301	301
	4,008	**4,008**	**301**	**301**

Վարձակալության գործարքները կնքված են չկապակցված անձանց հետ նույնանման գործարքների համար կիրառվող գներով:

19. Պայմանական դեպքեր

19.1. Ապահովագրություն

Ապահովագրությունը ՀՀ-ում համեմատաբար նոր է և դեռ զարգացման փուլում է գտնվում, և ապահովագրության շատ ձևեր դեռ հասանելի չեն: Ընկերությունն ամբողջովին ապահովագրված չէ իր գործունեության ընդհատման կամ էական կրճատման, երրորդ անձանց հանդեպ հնարավոր պարտավորությունների գծով՝ կապված գույքային, բնապահպանական կամ առողջական վնասների հետ հնարավոր միջադեպերի արդյունքում: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ապահովագրական պաշտպանություն ձեռք չի բերել, առկա է ռիսկ, որ որոշ ակտիվների վնասումը կամ պարտավորությունների առաջացումը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

19.2. Հարկային անորոշություններ

Հարկային համակարգը ՀՀ-ում նույնպես համեմատաբար նոր է և աչքի է ընկնում օրենսդրական հաճախակի փոփոխություններով, պաշտոնական պարզաբանումներով, որոնք երբեմն անհստակ են, հակասական կամ տարընթերցումների տեղիք տվող: Հարկային մարմինները կարող են ստուգել Ընկերության հարկային հաշվարկներն ու հայտարարագրերը և իրավունք ունեն տույժ-տուգանքներ նշանակելու:

Նշված հանգամանքները կարող են առաջացնել նշանակալի հարկային ռիսկեր: Ընկերության ղեկավարությունը վստահ է, որ իր հարկային պարտավորությունները հաշվարկել է պատշաճ կերպով՝ հիմնվելով ՀՀ հարկային օրենսդրության, հարկային հարաբերություններ կարգավորող այլ իրավական ակտերի՝ իր մեկնաբանության վրա:

19.3. Դատական գործեր

Հաշվետու ժամանակաշրջանում և դրանից հետո մինչև սույն հաշվետվությունների հրապարակումը Ընկերության դեմ որևէ դատական գործ չկա:

Տնօրեն Հաշվապահ

Արթուր Հարությունյան Մելորա Մեյրոյան

28 մարտի 2025թ.